ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 144- Ա

12 մայիսի 2015 թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N 21-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<ա>> ենթակետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թ. մայիսի 6-ի N 728-ՆՀ հրամանագրի 1.6-րդ կետի 1-ին պարբերության դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N41-Ա որոշումը

որոշում եմ՝

1.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2015 թվականի փետրվարի 18-ի <<Ծովագյուղի ԱԱՊԿ>>, <<Ձորագյուղի ԲԱ>>, <<Կարճաղբյուրի ԱԱՊԿ>>, <<Գանձակի ԱԱՊԿ>>, <<Ակունքի ԱԱՊԿ>>, <<Վերին Գետաշենի ԲԱ>>, <<Վարդենիսի ստոմատոլոգիական պոլիկլինիկա>>, <<Գավառի պոլիկլինիկա>>, փակ բաժնետիրական ընկերությունների տնօրենների թափուր պաշտոնների համար բաց մրցույթ հայտարարելու մասին>> N 21-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ